Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունիսի 25-ի N 921 - Ն որոշման

ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Կանխավճարների՝ մաքսային միասնական հաշվին մուտքագրումն իրականացվում է «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 39-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված՝ վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպությունների միջոցով՝ անկանխիկ եղանակով մաքսային մարմինների կողմից կիրառվող էլեկտրոնային համակարգի (այսուհետ սույն որոշման մեջ՝ համակարգ) միջոցով:

2. Կանխավճարների՝ մաքսային միասնական հաշվին մուտքագրումն իրականացվում է՝

1) դրամական միջոցները վճարողի բանկային հաշվից վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպությունների միջոցով (այդ թվում՝ պետական վճարումների էլեկտրոնային հարթակի (e-payments) միջոցով) մաքսային միասնական հաշվին փոխանցելու արդյունքում.

2) մաքսային անձնական հաշվի քարտում հաշվառված պարտավորությունների վերահաշվարկման արդյունքում.

3) համապատասխան գանձապետական ավանդային հաշվից՝ մաքսային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով ներդրված դրամական միջոցների՝ մաքսային միասնական հաշվին փոխանցելու արդյունքում:

3. Կանխավճարների՝ մաքսային միասնական հաշվին մուտքագրումից հետո դրանք արտացոլվում են մաքսային պարտավորությունները վճարողի (հայտարարատուի) մաքսային անձնական հաշվի քարտում:

4. Փոխանցված դրամական միջոցների մուտքագրումը մաքսային միասնական հաշվին մաքսային մարմինների կողմից համարվում է կատարված՝

1) համակարգի միջոցով դրանց մարման նպատակով համապատասխան գանձապետական հաշվին փոխանցվելու վերաբերյալ փաստաթղթերը կամ տեղեկությունները մաքսային մարմիններին հասանելի դառնալու պահից.

2) համակարգում համապատասխան փաստաթղթերի կամ տեղեկությունների վերաբերյալ տվյալների բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի միջոցով՝ օրական կտրվածքով, պետական գանձապետական համապատասխան հաշիվներին կատարված մուտքերի վերաբերյալ տեղեկությունների՝ մաքսային մարմնին հասանելի դառնալու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ